7 Աբխտղամա։ Ով խափանէ՝ դատի ի
տէ։ Կատարիչքն ա-
8 ըննին յԱյ։



Նկ. 73. Արձ. № 117։

Ծանոթություն.— Առաջին տողում Պ գիրն երկու քարերի միացման տեղում է փորագրված, որ փչրվել է և այժմ չի կարդացվում։

## 118. Նախորդի կողքին

(Լուս. № 74)

**Հ ՉԺԲ Մ 1263**

Հրատարակված է՝ Ջալ 35, Դրիմ 62, Վիմ 106



Նկ. 74. Արձ. № 118։

1 ՉԺԲ։
2 Յուսով անմահին, ես՝ Ստեփա-
3 նոս քահանա, փակակալ սբ ուխտի-
4 ս Գանձասարա, միաբանեցա սբ Ածա-
5 ծնիս առաջնորդութե հաւր Կ-
6 իրակոսի եւ այլ եղբարցս։ Եւ սոքա էտ-
7 ուն Ա պատարագ ի տաւնի Կիրակոսի։
Կաիչ
8 ան Այ։

Ծանոթություն.— [յ]առաջնորդութե բառը վերաբերում է միայն հաւր Կիրակոսի-ին, իսկ եւ այլ եղբարցս-ից հետո զեղչված է համաձայնութեամբ, յաւժարութեամբ, հաւանութեամբ կամ մի այլ նույնիմաստ բառ։

2. Արձանագրության վերջում կաիչ ան Այ պետք է կարդալ կատարիչքն աւրհնին յԱստուծոյ։

## 119. Նույն պատին, № 114-ի տակին

**Հ ՉԺԴ Մ 1265**

Հրատարակված է՝ Ջալ 37, Դրիմ 63, Վիմ 107

1 Ի թվիս ՉԺԴ։ Կամաւն Այ, ես՝ Աբրահամ, Փուչկին
2 որդին, ամուսին իմ՝ Արզոյն եւ մեր որդին՝ Քամքամն մի-
3 աբանեցաք մեծ յուսով ի սբ Ածածինս եւ տուաք
4 արդիւնս յեկեղեցիս։ Սիմեոն Տոթոռկա որդին